



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » մայիս 2025 թվականի №254

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի
1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015
թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հաշվի առնելով
«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ » ՓԲԸ-ի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Կոտայքի մարզ Արզնի համայնքի 16-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 8 հող , 14/1 հող
14/2 հող հասցեներում ջրամատակարարման համակարգի կառուցման
աշխատանքների իրականացման համար « ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ » ՓԲԸ-ին տալ
շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:
2. Պարտավորեցնել «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ » փակ բաժնետիրական ընկերությունը Արզնի
համայնքապետարանի 900105232244 հաշվեհամարին վճարել 15 000 (տասնհինգ
հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան
հաջորդող օրվանից:



ՖԵԼԻԲՍ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » մայիս 2025 թվականի №255


ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման
պահանջների և հիմք ընդունելով Մարետա Լևոնի Դայանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող ,
07-016-0599-0009 կադաստրային ծածկագրով 0.05248 հա մակերեսով
հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի , 3-րդ
թաղամաս , 13/1 հողամաս :
2. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական
գրանցման՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի
սպասարկման գրասենյակ, պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » մայիս 2025 թվականի №256

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման
պահանջների և հիմք ընդունելով Արմեն Մարլենի Արմենյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող ,
07-016-0322-0009 կադաստրային ծածկագրով 0.10966 հա մակերեսով
հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի , 4-րդ
թաղամաս , 10 հողամաս :
2. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական
գրանցման՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի
սպասարկման գրասենյակ, պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒԿՂ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » մայիս 2025 թվականի №257

**ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի
24-րդ կետի պահանջներին և հիմք ընդունելով
ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 02-ի թիվ 44 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արզնի համայնքի ղեկավարին համայնքի կարիքների համար ձեռք բերել ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի 5-րդ փողոց 50/2 հասցեում գտնվող 07-016-0028-0051 կադաստրային ծածկագրով 0.0675 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և 557.6 քմ մակերեսով հանրախանութ / անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20012025-07-0162 վկայական /:
2. Համայնքի բյուջեի համապատասխան հոդվածից հատկացնել 88800000 / ութսունութ միլիոն ութ հարյուր հազար / ՀՀ դրամ հողամասի և շինության ձեռքբերման նպատակով, որից 10 %-ի չափով 8800000 / ութ միլիոն ութ հարյուր հազար / ՀՀ դրամը նախատեսվում է փոխանցել որպես հարկային պարտավորություն:
3. Նոտարական վավերացման պարտականությունները դնել Արզնի համայնքի

ղեկավարի Ֆելիքս Վալերիևիչ Միրզոնի վրա :

5.Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ, պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » մայիս 2025 թվականի №258

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 18-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.01.2023 թվականի թիվ 10012023-07-0046 և հիմք ընդունելով Արմինե Գրենիկի Միրզոյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի, Արզնի համայնքի , 6-րդ փողոց 44 հասցեում գտնվող, 07-016-0001-0029 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.07515 հա մակերեսով հողամասում առկա ինքնակամ կառուցված բնակելի տան նկուղ - 10.95 քմ

- արտաքին մակերեսով , 1-ին հարկ - 146.58 քմ արտաքին մակերեսով ,
2-րդ հարկ 142.6 քմ արտաքին մակերեսով համարել օրինական:
2. Պարտավորեցնել Արմինե Գրենիկի Միրզոյանին ինքնական կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105232210 հաշվեհամարին վճարել 591000 / հինգ հարյուր իննսունմեկ հազար / ՀՀ դրամ:
 3. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:
 4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 18-ի « Ինքնական կառուցված շինությունների օրինականացման մասին » N 186 որոշումը :
 5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻԲՍ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » մայիս 2025 թվականի №259

**ԱՆԱՀԻՏ ՃԵՐՄԱԿՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ
(ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների և հիմք ընդունելով Անահիտ Միշայի Ճերմակյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անահիտ Միշայի Ճերմակյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնք 12-րդ փողոց 3/3 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.01016 հա մակերեսով 07-016-0028-0050 կադաստրային ծածկագրով հողամասում կառուցված բնակելի տան համար տալ ավարտական ակտ:
2. Պարտավորեցնել Անահիտ Միշայի Ճերմակյանին՝ համայնքապետարանի 900105232160 հաշվեհամարին վճարել 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒՎ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » մայիս 2025 թվականի №260

**ՄԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ
(ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**


Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների և հիմք ընդունելով Մերի Մուրադի Հարությունյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Մերի Մուրադի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնք Արզնի ձոր զանգված 4/1 հասցեում գտնվող 0.27355 հա մակերեսով 07-016-1256-0024 կադաստրային ծածկագրով հողամասում կառուցված հանգստի գոտու սանհանգույցի և շվաքարանի համար տալ ավարտական ակտ:
2. Պարտավորեցնել Մերի Մուրադի Հարությունյանին՝ համայնքապետարանի 900105232160 հաշվեհամարին վճարել 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒԿ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
« 29 » մայիս 2025 թվականի №261

**ԳՈՒ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՆՈՐԱ ԱԲԳԱՐՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴԻՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի
1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015
թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք
ընդունելով Գոռ Աշոտի Արգարյանի ներկայացուցիչ Էդմոնտ Ավետիսյանի
հայտը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Գոռ Աշոտի Արգարյանին և Նորա Արարատի Արգարյանին տալ նախագծման
թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ ընդհանուր
համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ համայնք
Արզնի համայնքի 4-րդ թաղամաս 107 հասցեում գտնվող 07-016-0320-0016
կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ
արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական
օբյեկտների գործառնական նշանակության 0.1046 հա մակերեսով հողամասում
մրգերի վերամշակման շինության, պարիսպի, ցանկապատի, ծածկոցի և օժանդակ
շինության կառուցման իրականացման աշխատանքների նախագծային
փաստաթղթերի մշակման համար (ճարտարապետահատակագծային
առաջադրանքը կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի, Հեռ.
(0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » հունիս 2025 թվականի №262

**ՆԵԼԼԻ ՎԱՐԴԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴԻԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության « Աշխատանքային օրենսգրքի »

164-րդ հոդվածի պահանջներին .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Արզնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Նելլի Վարդանի Հարությունյանին տրամադրել 2023-2024 թթ. հերթական արձակուրդից 12 / տասներկու / աշխատանքային օր՝ 2025 թվականի հունիսի 06-ից մինչև սույն թվականի հունիսի 23-ը:
2. Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները ժամանակավոր դնել գլխավոր մասնագետ -հաշվապահ Ապրես Ռաֆիկի Խաչատրյանի վրա :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻԶ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » հունիս 2025 թ. №263

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ « ԱՐԶՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՈՆԻԴ ԵԴԻԳԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ » ՀՈԱԿ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 5-րդ կետի ,
« Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 30-րդ հոդվածի դրույթների.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. « ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՈՆԻԴ ԵԴԻԳԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ
ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ »
ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արզնի համայնքի ղեկավար
Տիմոֆեյ Յակովի Իվանովին տրամադրել չվճարվող արձակուրդ 6 / վեց/
աշխատանքային օր ` 06.06.2025 թվականից մինչև 13.06.2025 թվականը:
2. ՀՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել ՀՈԱԿ-ի
տնօրենի տնտեսական գծով տեղակալ Սուրեն Պետրովիչ Միխայլովի վրա :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » հունիս 2025 թվականի №264

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»
օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. 2025 թվականի հունիսի 05-ին , ժամը 12:00-ին հրավիրել համայնքի
ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով՝

- 1) Համայնքային սեփականություն հանդիսացող Արզնի համայնքի 8-րդ փողոց
5-րդ նրբանցք 2/1 հասցեում գտնվող հողամասը, հողամասում առկա
ավտոտնակը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի
եղանակով օտարելու մասին:
- 2) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ընդլայնման
նպատակով՝ ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին :
- 3) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ընդլայնման
նպատակով՝ ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին :
- 4) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին :
- 5) Էդգար Արամայիսի Սայադովին սեփականության իրավունքով պատկանող
հողամասն Արզնի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ
փոխանակելուն համաձայնություն տալու մասին :
- 6) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային

նշանակությունը փոփոխելու մասին:

7) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

8) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

9) Իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

10) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

11) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:


12) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

13) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

14) Իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » հունիս 2025 թվականի №265


**ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՍԱՄՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ
(ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների և հիմք ընդունելով Արթուր Արմենի Առուսամյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արթուր Արմենի Առուսամյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնք 16-րդ փողոց 1-ին նրբանցք 2-րդ նրբանցք 14/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.04 հա մակերեսով 07-016-0059-0027 կադաստրային ծածկագրով հողամասում կառուցված մեկ հարկանի բնակելի տան և պարսպապատման համար տալ ավարտական ակտ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » հունիս 2025 թվականի №266

**ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻՆՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի
1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015
թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք
ընդունելով Վրեժ Վարդանի Ավագյանի հայտը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վրեժ Վարդանի Ավագյանին տալ նախագծման թույլտվություն
(ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով
իրեն պատկանող ՀՀ Կոտայքի մարզ համայնք Արզնի համայնքի 15-րդ փողոց , 43
հասցեում գտնվող 07-016-0045-0033 կադաստրային ծածկագրով բնակավայրերի
նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական
նշանակության 0.08 հա մակերեսով հողամասում մեկ հարկանի բնակելի տան ,
ամառային խոհանոցի, ավտոնակի և պարիսպի կառուցման աշխատանքների
նախագծային փաստաթղթերի մշակման համար (ճարտարապետահատակագծային
առաջադրանքը կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » հունիս 2025 թվականի №267

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 18-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով հաշվի առնելով « ՏԻԳՐԱՆ ՓՈԹԻԿՅԱՆ » ԱԶ-ի կողմից 25.01.2024 թվականին կազմված հաշվառման / Չափագրման / տվյալների մուտքագրման տեղեկանքը՝ մուտքագրման ծածկագիր՝ 2024N9AGAS / և հիմք ընդունելով
Գեորգի Հայկի Հովհաննիսյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- ՀՀ Կոտայքի մարզի, Արզնի համայնքի , 14-րդ փողոց , 10 հասցեում գտնվող, 07-016-0047-0022-ից կադաստրային ծածկագրով 0.08 հա մակերեսով

բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում առկա ինքնակամ կառուցված 54.28 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 7.67 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Գեորգի Հայկի Հովհաննիսյանին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105232210 հաշվեհամարին վճարել 257000 / երկու հարյուր հիսունյոթ հազար/ ՀՀ դրամ :
3. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՖԵԼԻՔՍ ՄԻԲԶՈՒՎ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » հունիս 2025 թվականի №268

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 18-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով հաշվի առնելով « ՏԻԳՐԱՆ ՓՈԹԻԿՅԱՆ » ԱԶ-ի կողմից 25.01.2024 թվականին կազմված հաշվառման / Չափագրման / տվյալների մուտքագրման տեղեկանքը՝ մուտքագրման ծածկագիր՝ 2024F54NRP / և հիմք ընդունելով
Գեորգի Հայկի Հովհաննիսյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի, Արզնի համայնքի , 14-րդ փողոց , 12 հասցեում գտնվող, 07-016-0047-0023 կադաստրային ծածկագրով 0.16 հա մակերեսով

բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում առկա ինքնական կառուցված 97.44 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը , 51.29 քմ արտաքին մակերեսով ծածկարանը , 52.65 քմ մակերեսով լողավազանը , 6.65 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 16.32 քմ արտաքին մակերեսով շվաքարանը մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Գեորգի Հայկի Հովհաննիսյանին ինքնական կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105232210 հաշվեհամարին վճարել 383000 / երեք հարյուր ութսուներեք հազար/ ՀՀ դրամ :
3. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԿ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 05 » հունիս 2025 թվականի №269

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների հաշվի առնելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Համաձայնություն տալ «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին Արզնի համայնքի, վարչական տարածքում գտնվող Երևան-Սևան մայրուղի 23-25 կմ հասցեում գտնվող Վահան Մանվելի Խալոյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքի 10 ԿՎ ՄԳ-ի կառուցում և 1000/10 Կվա հզ ՇԼՏԵ-ի տեղադրում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված ՌՓԻ-43-25 նախագծով և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն :
- Պարտավորեցնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը Արզնի համայնքապետարանի 900105232244 հաշվեհամարին վճարել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻԶ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 05 » հունիս 2025 թվականի №270

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման
պահանջների և հիմք ընդունելով Էլյա Վաչագանի Եղիազարյանի դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող ,
07-016-0514-0092 կադաստրային ծածկագրով 0.05568 հա մակերեսով
հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի , 7-րդ
գանգված, 8/2 հողամաս :
2. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական
գրանցման՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի
սպասարկման գրասենյակ, պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 05 » հունիս 2025 թվականի №271

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի
64 հոդվածի 2-րդ կետի պահանջները և հաշվի առնելով որ հատկացվածից ավել
օգտագործվող հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների
օտարման կամ անվտանգության գոտիներում չի առաջացնում հարկադիր
սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները
և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների
կյանքին ու առողջությանը հիմք ընդունելով Էյա Վաչագանի Եղիազարյանի
դիմումը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Էյա Վաչագանի Եղիազարյանին հատկացված 0.0525 հա մակերեսով 07-016-0514-0092 կադաստրային ծածկագրով հողամասից մինչև 20% ավել օգտագործվող՝ 0.00318 հա հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԿՂ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 05 » հունիսի 2025 թվականի №272

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը.

ՀՀ, Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի տեղակալ Էդիկ Աֆյանը 07.05.2025թ. հայտնաբերել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (*այսուհետք՝ նաև Օրենսգիրք*) 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունք ունեցող անձի կողմից առանց թույլտվության շինարարական աշխատանքներ իրականացնելու իրավախախտումը:

Հայտնաբերված իրավախախտման փաստի առթիվ 07.05.2025թ. կազմվել է արձանագրություն՝ հետևյալի մասին.

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնք հասցեում գտնվող Շավարշ Արմանի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-016-0232-0003) կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերը նշված հասցեում առանց քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվում են շինարարական ինքնակամ կառուցապատման աշխատանքներ:

Որպես իրավախախտման փաստը հավաստող ապացույց իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարահանվել է իրավախախտման վայրը և կազմվել է դրա վերաբերյալ արձանագրություն:

Հայտնաբերված իրավախախտման փաստով ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

2. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցները.

Գործի քննության ընթացքում, որպես մեկ համակցություն, հետազոտվեցին ՀՀ, Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի տեղակալ Էդիկ Աֆյանի 07.05.2025թ. արձանագրությունը, իրավախախտման կատարման պահին կատարված լուսանկարները:

3. Վարչական ակտի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գործի փաստական հանգամանքների և ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հաստատվել է, որ 07.05.2025թ. ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնք հասցեում գտնվող Շավարշ Արմանի Դուկասյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-016-0232-0003) կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերը նշված հասցեում առանց քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվում են շինարարական ինքնակամ կառուցապատման աշխատանքներ:

Շավարշ Արմանի Դուկասյանը, ծանուցված լինելով հարուցված վարչական վարույթի մասին, չի ներկայացրել բացատրություններ և պարզաբանումներ՝ իրավախախտման վերացման մասին, իսկ վարչական մարմինն իր հերթին իր միջոցներով հնարավորություն չի ունեցել ձեռք բերել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք քննարկվող գործի նկատմամբ առավելապես կարող էին ունենալ զանցանքը մեղմացնող հանգամանքներ:

4. Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝

Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, պետության անվտանգության ապահովման, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Սեփականության կամ հոդօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնական կառույցների հաշվառման կարգ սահմանող կառավարության որոշմամբ (այսուհետ սույն հոդվածում նաև՝ Կառավարության որոշում) սահմանված կարգով հաշվառված ինքնական կառույցների (կիսակառույց ինքնական կառույցների հատվածների) վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնական կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները: Կառավարության կողմից կարող է սահմանվել սույն մասով նախատեսված ինքնական կառույցների (կիսակառույց ինքնական կառույցների հատվածների) օրինականացման առանձնահատկություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ինքնական կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 1.1. ենթակետի համաձայն՝ Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

Կառուցապատողները պարտավոր են՝

ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերության «ե» և «ե.1» կետերով նախատեսված դեպքերի), շինարարության թույլտվության հիման վրա. . . .:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, **ինչպես նաև կանխարգելումը, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:**

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝

1. Համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

8) կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է

համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Հաշվի առնելով այն, Շավարշ Արմանի Ղուկասյանի կողմից, ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնք հասցեում առանց քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվում են շինարարական ինքնակամ կառուցապատման աշխատանքներ՝ առանց որևէ թույլտվության, հիմք ընդունելով Օրենսգրքի 23-րդ, 34-րդ, 154-րդ, 219. 1-րդ, 252-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ ՝

1. Շավարշ Արմանի Ղուկասյանին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. Նախազգուշացնել Շավարշ Արմանի Ղուկասյանին այն մասին, որ վարչական տույժ նշանակելուց հետո շինարարական աշխատանքներն ինքնակամ շարունակվելու դեպքում այն կառաջացնի վարչական տուգանք՝ 2.000.000-3.000.000 ՀՀ դրամ գումարի չափով:
3. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու պահից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում 900105232103 հաշվեհամարին:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և կարող է բողոքարկվել վերադատության կարգով, դրա ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ